

Կ-470'-24.03.2014-ԳԿ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության 2009 թվականի հուլիսի 10-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետև՝ օրենք) 1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները, կազմակերպական-իրավական ու ֆինանսատնտեսական հիմքերը, կարգավորում է հանրակրթության գործընթացին մասնակից ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավահարաբերությունները, ապահովում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված բոլորի համար հավասար կրթության իրավունքի, անվճար պարտադիր միջնակարգ կրթության հնարավորության հիմքերը:»:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«4. Միջնակարգ կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Սույն օրենքի 2-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունիսի 1-ից:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ներկայացնում <<Կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (Կ-470-470¹-24.03.2014-ԳԿ-010/1) վերաբերյալ արված դիտողությունների և առաջարկությունների

Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1	2	3	4
Հայաստանի Հանրապետության կառավարություն	1. 19.05.2014 ՀՀ ԱԺ նիստում առաջին ընթերցմամբ անցած <<Կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Կ-470-24.03.2014-ԳԿ-010/1) ՀՀ օրենքի նախագծում առաջարկում ենք . 1) նախագծի հոդված 1-ում՝ օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.		Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն.

	<<7. Հայաստանի Հանրապետությունում տասներկուամյա միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթությունը պարտադիր է մինչև սովորողի 19 տարին լրանալը, եթե այդ իրավունքը չի իրացվել ավելի վաղ: Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է: Պարտադիր միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթության պահանջը չի տարածվում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների		
--	---	--	--

	որոշակի խմբերի վրա:>>: 2) նախագիծը լրացնել նոր՝ հոդված 3-րդով. «Հոդված 3. Սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին պարբերության պահանջը չի տարածվում սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին հանրակրթական ուսումնական հաստատությունների 9-րդ և բարձր դասարաններում սովորողների վրա:» 2. 19.05.2014 ՀՀ ԱԺ նիստում առաջին ընթերցմամբ անցած «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (Կ-470՝-24.03.2014-ԳԿ-010/1) նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:		
--	--	--	--